# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3(19/20)

## Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 21.11.2019 թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 35 անդամներից 27 -ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ՝

1. **«Գիտափորձի ավտոմատացում և մոդելավորում» մասնագիտացման մագիստրատուրայի ծրագրերի հեռանկարների քննարկում:**
   *Զեկ.՝ ԿԷՄ ամբիոնի վարիչ,*
   *ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ժ.Բաբաջանյան*
2. **Ֆակուլտետում կատարվող բազային լաբորատորիաների շրջանակներում կատարվող աշխատանքների հաշվետվությունների հաստատման հարցը:**
   *Զեկ.՝ Գիտական ղեկավարներ*
3. **Ֆակուլտետի և բակալավրիատի ծրագրի անվանափոխության հարցը:**
   *Զեկ.՝ դեկան, ֆ.մ.գ.դ.,*
   *պրոֆեսոր Խ.Վ.Ներկարարյան*
4. Ընթացիկ հարցեր:

### *Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ.*

***Լսեցին-*** ԿԷՄ ամբիոնի վարիչ՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ժ.Բաբաջանյանի զեկույցը նույն ամբիոնի մագիստրոսական ծրագրի վերաբերյալ: Քննարկվեցին առարկայական ցանկն ու դասավանդման մեթոդներին վերաբերվող հարցեր:

***Որոշեցին.-*** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

### *Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.*

***Լսեցին -*** Ֆակուլտետում գործող բազային լաբորատորիաների ղեկավարների հաղորդումները այդ լաբորատորիաներում ընթացող աշխատանքների վերաբերյալ: Մասնավորապես բանախոսների կողմից բերվեցին թվային տվյալներ տպագրված աշխատանքների՝ հոդվածների, թեզիսների և կոնֆերանսների մասնակցության վերաբերյալ:

***Որոշեցին.-*** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.*

***Լսեցին*** – Ռադիոֆիզիկայի դեկան ֆ.մ.գ.դ.,պրոֆեսոր Խ.Վ.Ներկարարյանին: Հարցը, լինելով արդիական, առաջացրեց քննարկում՝ ֆակուլտետի պրոֆեսորների, դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Բերվեցին նման ուղղություններ ունեցող արտասահմանյան ԲՈՒՀ-երի մի շարք օրինակներ:

***Որոշեցին*** – Համապատասխան շտկումներից հետո բակալավրիատի ծրագիրը վերանվանել «Ռադիոհաճախային և համակարգչային տեխնոլոգիաներ»:

*Օրակարգը սպառված է:*

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝ Խ.Վ. Ներկարարյան

Գիտքարտուղար Հ.Ա. Շահինյան